# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2017 թվականի N 18-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի դրույթներով, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամներ՝***

| | | | |
|---|---|---|---|
| ***Կողմ՝*** | ***Ն. Ջհանգիրյան*** | ***Կողմ՝*** | ***Հ. Հակոբյան*** |
| ***Կողմ՝*** | ***Ա. Լալայան*** | ***Կողմ՝*** | ***Մ. Մկրտչյան*** |
| ***Կողմ՝*** | ***Ս. Փարսյան*** | ***Կողմ՝*** | ***Ա. Շադունց*** |
| ***Կողմ՝*** | ***Ս. Գալստյան*** | ***Կողմ՝*** | ***Ա. Աղաջանյան*** |

***Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝*** ***Ն. Շադունց***

16 հունիսի 2017թ.
գյուղ Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2017 թվականի N 19-Ա

## «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1.Համաձայնություն տալ Եվրոպական միության «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրի շրջանակներում ներկայացված նախաձեռնությանը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի անդամագրվելուն:

2.Լիազորել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցին հանդես գալու համայնքի անունից և մասնակցելու ԵՄ կողմից հայտարարված դրամաշնորհի մրցույթին:

*Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի*
*Տեղ համայնքի ավագանու անդամներ՝*

| | | | |
|---|---|---|---|
| Կողմ՝ | Ն. Ջհանգիրյան | Կողմ՝ | Հ. Հակոբյան |
| Կողմ՝ | Ա. Լալայան | Կողմ՝ | Մ. Մկրտչյան |
| Կողմ՝ | Ս. Փարսյան | Կողմ՝ | Ա. Շադունց |
| Կողմ՝ | Ս. Գալստյան | Կողմ՝ | Ա. Աղաջանյան |

*Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի*
*Տեղ համայնքի ղեկավար՝* Ն. Շադունց

16 հունիսի 2017թ.
գյուղ Տեղ

Mayors for Economic Growth

## *Անդամակցության հայտ*

Ես, Ներսես Շադունցս, հանդիսանալով Տեղ համայնքի ղեկավար, լիազորված եմ Տեղ համայնքի ավագանու կողմից 16.06.2017թ. միանալ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» (այսուհետ՝ ՀՀՏԶ) նախաձեռնությանը՝լիովինգիտակցելով այն հանձնառությունները, որոնք սահմանված են ՀՀՏԶ ծրագրի հայեցակարգով և շարադրված են ստորև:

Ըստ այդմ,իմ կողմից ղեկավարվող համայնքապետարանը սկզբունքորեն հանձն է առնում սերտորեն համագործակցել տեղական բիզնեսի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ արագացնելուկայուն և ներառականտեղական տնտեսական աճը, զարգացումը և աշխատատեղերի ստեղծումը,ավելացնելով մեր կողմից գործադրվող ջանքերը ստորև ներկայացված 5 ոլորտներից առնվազն 3-ում.

1. Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ,
2. Հմտությունների և մարդկային կապիտալի զարգացում,
3. Հող և ենթակառուցվածքներ,
4. Ֆինանսական միջոցների հասանելիություն,
5. Արտաքին դիրքավորում և մարքեթինգ:

Սույն հանձնառությունների իրականացման շրջանակում մեր համայնքապետարանը պարտավորվում է.

- Համագործակցելով մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների հետ՝ մշակել ՀՀՏԶ քարտուղարության կողմից ներկայացված ուղեցույցներին համապատասխան Տեղական տնտեսական զարգացման ծրագիր, և հաստատել այնավագանու վերը նշված որոշման ընդունումից հետո առավելագույնը մեկ տարվա ընթացքում:
- Համագործակցելով մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների հետ՝ իրականացնել վերլուծություն և սահմանել գործողություններ, որոնք միտված կլինեն աճին, զարգացմանը և զբաղվածության խթանմանը:
- Այդ գործողությունների համար սահմանել արդյունքներիհստակ թիրախներ:
- Ղեկավարվելպատշաճ կառավարման հիմնական սկզբունքներով՝ հատկապես հաշվետվողականության, թափանցիկության, հակակոռուպցիոն և բոլոր շահագրգիռ կողմերի հավասարաչափ ներգրավվածության մասով:
- Խրախուսել տեղական տնտեսական զարգացման գործընթացին բոլոր քաղաքական կուսակցությունների մասնակցությունը և ներգրավել համայնքի բնակչության բոլոր շերտերին,ապահովել գենդերային հավասարություն:
- Հաշվի առնել էկոլոգիական կայունությունը տեղական տնտեսական զարգացման ընթացքում:
- ՀՀՏԶ քարտուղարություն ներկայացնել կիսամյակային հաշվետվություններ Ծրագրի իրագործման ընթացքի և գրանցված արդյունքների վերաբերյալ:

Ես ընդունում եմ, որ իմ կողմից ներկայացված համայնքի մասնակցությունը ՀՀՏԶ նախաձեռնությանը կարող է դադարեցվել վերը նշված փաստաթղթերի (այն է, Տեղական տնտեսական զարգացման ծրագիր և դիտանցման կիսամյակային հաշվետվություններ) սահմանված ժամկետներում չներկայացման դեպքում, որի մասին ՀՀՏԶ քարտուղարությունը նախօրոք գրավոր կծանուցի:

Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց

Ստորագրություն

ՀՀ Սյունիքի մարզ Տեղի համայնքապետարան
հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ գ. Տեղ փող 35թիվ 2

Ներսես Շադունց
Հեռ. 093-45-23-00
Էլ. հասցե tegh.syuniq@mta.gov.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2017 թվականի N 20-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N2-Ն որոշման հավելվածում, « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցիչների թեկնածությունները ներկայացնելու և համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» N6-Ն որոշման մեջ և հավելվածում, « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերի մասին» N7-Ն որոշման մեջ և հավելվածում, ««Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական» հիմնարկ հիմնադրելու, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական» հիմնարկի կանոնադրությունը հաստատելու, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արավուսի գյուղապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կոռնիձորի գյուղապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Վաղատուրի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկների և Խնածախի, Խոզնավարի, Տեղի, Քարաշենի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ/գյուղապետարան/ հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին » N8-Ն որոշման հավելվածում «վարչական ներկայացուցիչ» բառակապակցության մեջ «ներկայացուցիչ» բառը և դրա համապատասխան հոլովածները փոխարինել «ղեկավար» բառով և դրա համապատասխան հոլովածներով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի*
*Տեղ համայնքի ավագանու անդամներ՝*

*Կողմ՝* *Ն. Ջհանգիրյան*
*Կողմ՝* *Հ. Հակոբյան*
*Կողմ՝* *Ա. Լալայան*
*Կողմ՝* *Մ. Մկրտչյան*
*Կողմ՝* *Ս. Փարսյան*
*Կողմ՝* *Ա. Շադունց*
*Կողմ՝* *Ս. Գալստյան*
*Կողմ՝* *Ա. Աղաջանյան*

*Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի*
*Տեղ համայնքի ղեկավար՝* *Ն. Շադունց*

16 հունիսի 2017թ.
գյուղ Տեղ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2017 թվականի N 21-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 28-ի « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 28-ի նիստի օրակարգը հաստատելու մասին» N1-Ա որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N10-Ա որոշման հավելվածում «վարչական ներկայացուցիչ» բառակապակցության մեջ «ներկայացուցիչ» բառը և դրա համապատասխան հոլովածները փոխարինել «ղեկավար» բառով և դրա համապատասխան հոլովածներով:

***Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամներ՝***

| | | | |
|---|---|---|---|
| **Կողմ՝** | **Ն. Ջհանգիրյան** | **Կողմ՝** | **Հ. Հակոբյան** |
| **Կողմ՝** | **Ա. Լալայան** | **Կողմ՝** | **Մ. Մկրտչյան** |
| **Կողմ՝** | **Ս. Փարսյան** | **Կողմ՝** | **Ա. Շադունց** |
| **Կողմ՝** | **Ս. Գալստյան** | **Կողմ՝** | **Ա. Աղաջանյան** |

***Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝*** **Ն. Շադունց**

16 հունիսի 2017թ.
գյուղ Տեղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2017 թվականի N 22-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 22-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է**.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 2-րդ կետի հավելվածի 4-րդ կետում «Հարութ Ավագյան» բառերը փոխել «Անժելա Գրիգորյան» բառերով:

***Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամներ՝***

| | | | |
|---|---|---|---|
| **Կողմ՝** | **Ն. Ջհանգիրյան** | **Կողմ՝** | **Հ. Հակոբյան** |
| **Կողմ՝** | **Ա. Լալայան** | **Կողմ՝** | **Մ. Մկրտչյան** |
| **Կողմ՝** | **Ս. Փարսյան** | **Կողմ՝** | **Ա. Շադունց** |
| **Կողմ՝** | **Ս. Գալստյան** | **Կողմ՝** | **Ա. Աղաջանյան** |

***Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝*** **Ն. Շադունց**

16 հունիսի 2017թ.
գյուղ Տեղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
«16» հունիսի 2017 թվականի N 23-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 36-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

***Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի***
***Տեղ համայնքի ավագանու անդամներ՝***

| | | | |
|---|---|---|---|
| **Կողմ՝** | *Ն. Ջհանգիրյան* | **Կողմ՝** | **Հ. Հակոբյան** |
| **Կողմ՝** | *Ա. Լալայան* | **Կողմ՝** | **Մ. Մկրտչյան** |
| **Կողմ՝** | *Ս. Փարսյան* | **Կողմ՝** | **Ա. Շադունց** |
| **Կողմ՝** | *Ս. Գալստյան* | **Կողմ՝** | **Ա. Աղաջանյան** |

***Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի***
***Տեղ համայնքի ղեկավար՝*** **Ն. Շադունց**

16 հունիսի 2017թ.
գյուղ Տեղ